Հաշվետվություն

2024 թվականի հոկտեմբերի 23-26-ը Ռումինիա,
(Բուխարեստ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Աննա Կարապետյան, Կադաստրի կոմիտեի գեոդեզիայի և հողաշինարարության վարչության երկրատարածական տվյալների բաժնի գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ռումինիա (Բուխարեստ), 2024 թվականի հոկտեմբերի 23-26-ը

3. **Հրավիրող կողմը.**
   Ռումինիայի գեոդեզիստների միություն (UGR)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Ռումինիայի գեոդեզիայի շաբաթ (RSW) 5-րդ միջոցառմանը մասնակցելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**
   Միջոցառման շրջանակներում քննարկվեցին հետևյալ թեմաները.
   - անշարժ գույքի շուկայի թափանցիկությունը,
   - անշարժ գույքի շուկայի մշտադիտարկում և գնահատում,
   - կադաստրի համակարգի ներկայացում,
   - տարբեր ոլորտներում ԱՏՀ ծրագրային փաթեթներում տարածական տվյալների հետ աշխատանքի կարևորությունը,
   - գեոդեզիական ժամանակակից սարքավորումների կիրառումը, ստացված արդյունքների վերլուծությունը ԱՏՀ միջավայրում,
   - տարածական տվյալներով կատարվող աշխատանքների ավտոմատացում, արհեստական բանականության կիրառում,
   - ԱՏՀ հավելվածների օգտագործումը համապատասխան նպատակային արդյունք ստանալու համար. մարտահրավերներ (AI, AR/VR, ML, DL),
   - ԱՏՀ տեխնոլոգիաները որպես կայուն զարգացման հիմք,
   - ինժեներական գեոդեզիա, նորագույն տեխնոլոգիաներ:

6. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

Ռումինիայի գեոդեզիական շաբաթը մասնագիտական համայնքի համար կարևորագույն իրադարձություններից էր, որին մասնակցում էին Չափագրողների միջազգային ֆեդերացիայի անդամ երկրներից ժամանած պատվիրակներ: Միջոցառմանը մասնակցում էին Չափագրողների միջազգային ֆեդերացիան, Գեոդեզիայի եվրոպական խումբը, Բուխարեստի Քաղաքացիական ճարտարագիտության տեխնիկական համալսարանը, Կադաստրի ու հողի գրանցման ազգային գործակալությունը, ինչպես նաև այլ կազմակերպություններ և՛ պետական, և՛ մասնավոր սեկտորներից:

Միջոցառման շրջանակներում ներկայացրել եմ «ԱՏՀ-ի կիրառումը հողերի կառավարման մեջ» խորագրով զեկույցը՝ կարևորելով Կադաստրի կոմիտի գործառույթների շրջանակներում ԱՏՀ-ի (GIS) դերի բարձրացման և կիրառելիության շրջանակի մեծացման համար նախաձեռնող քայլերը.

- ոլորտը կարգավորող մի շարք օրենքների և իրավական ակտերի ընդունում,
- բազային քարտեզագրական շերտերի թվայնացում,
- առկա քարտեզների և բազաների թարմացում,
- կադաստրային քարտեզների ուղղում,
- հողային ֆոնդ շերտի վերլուծություն՝ համեմատում փաստաթղթային տվյալների հետ,
- քարտեզագրական սխալների վերհանում,
- հասցեների գեոկոդավորում,
- աշխարհագրական անվանումների տեղեկատվական բազաների ստեղծում, գեոկոդավորում,
- ազգային գեոպորտալ, տարածական տվյալների ենթակառուցվածք:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման կամ հավաքի ժամանակ փաստաթղթեր չեն ստորագրվել: Միջոցառման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակել համագործակցությունը՝ կազմակերպելով սեմինարներ և համատեղ աշխատաժողովներ տարբեր ձևաչափերով:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ռումինիա այցը հնարավորություն էր ծանոթանալու ոլորտում առկա խնդիրներին, դրանց լուծման ուղղություններին և ներկայացնելով սեփական փորձի ու գիտելիքների վրա

հիմնված լուծումները՝ մաս կազմել միջազգային մասնագիտական համայնքի միասնական տեսլականի ձևավորման գործընթացին:
Կադաստրի կոմիտեն 2023 թվականի մայիսից հանդիսանում է Չափագրողների միջազգային ֆեդերացիայի (FIG) անդամ և այս տեսանկյունից մասնակցությունս Ռումինիայի գեոդեզիայի շաբաթին կարևորվում է:

9.Ստորագրությունը, ամսաթիվը:

Աննա Կարապետյան 30.10.2024 թ.